ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 մարտի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

29
(3238)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԹՈՐՈՍՅԱՆԻ «ՄԵԳԱՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԳԻԾԸ

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ իշխանության ներսում ակտիվ քննարկվում է առողջապահության եւ սոցիալական ոլորտների կառավարման նոր մոդելի ներդրումը, որի շրջանակում պետք է միավորվեն առողջապահության եւ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունները: Կառավարությունից «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններով՝ այդ նախաձեռնության հիմնական շահառուներից մեկը աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար, առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանն է, որը ակտիվ աշխատում է, որպեսզի ընտրություններից հետո ձեւավորվելիք կառավարությունում հենց ինքը զբաղեցնի միավորված գերատեսչության ղեկավարի պաշտոնը: Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների՝ քննարկվող նախագծի վրա աշխատանքները արդեն բավական առաջ են գնացել եւ մտնում են վերջնական փուլ: Նախագծի հեղինակները պնդում են, որ սոցիալական քաղաքականությունն ու առողջապահությունը պետք է կառավարվեն մեկ կենտրոնից՝ համակարգը «ամբողջությամբ վերափոխելու» նպատակով: Սակայն կառավարության ներսում այս գաղափարը միանշանակ չի ընդունվում:

⇨ էջ 5

Անցած հանգստյան օրերին վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր թիմակիցների հետ ավտոբուսով քարոզարշավի էր մեկնել սահմանամերձ Սյունիքի մարզ: ՔՊ-ականների այցը ակտիվորեն լուսաբանվում էր իշխանական տեղեկատվական հարթակներում, սակայն ուշագրավ մի հանգամանք՝ մարզի համայնքներից եւ ոչ մեկում վարչապետին համայնքապետերը չեն դիմավորել: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ ամբողջ այցի ընթացքում Փաշինյանին եւ նրա թիմակիցներին ուղեկցում էր միայն Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը: Տեսանյութերի կադրերից մեկում մի պահ երեւում է նաեւ Առուշ Առուշանյանը՝ Գորիսի համայնքապետը, որի անունը բարեւելիս, ինչպես երեւում էր կադրերից, Փաշինյանը հավանաբար չէր հիշում եւ նրան բարեւեց պարզապես «համայնքապետ» դիմելով: Միեւնույն ժամանակ, իշխանական քարոզարշավի կադրերում չեն երեւում Մեղրիի, Կապանի եւ Քաջարանի համայնքների ղեկավարները: Այս հանգամանքը առավել ուշագրավ է, եթե հիշենք, որ այդ համայնքների ղեկավարները նախկինում համարվում էին իշխանության ամենակոշտ ընդդիմախոսներից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Արդեն մեկ տարի է՝ «Ժողովուրդ» օրաթերթը հետեւողականորեն փորձում է հասկանալ, թե ինչ փուլում է գտնվում ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արփի Դավոյանի հետ առնչվող քրեական վարույթը, որը 2023-ից քննվում է: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 2018 թվականին ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունում քննվել է մի գործ, որով անցել է Արփի Դավոյանը: Նախնական տեղեկություններով՝ նա ՍՊԸ-ներ է հիմնադրել, ինչ-որ ներկրումներ արել, ապա խաբել պետությանը: Նա 2018 թվականի ապրիլից հետո ՊԵԿ քննչականում անգամ հարցաքննվել է: «Ժողովուրդ» օրաթերթի վերջին հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը տեղեկացրել է, թե արդեն իսկ նույնաբովանդակ հարցման պատասխան տրվել է նախկինում: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց ստացած բոլոր պաշտոնական գրությունները եւ պարզեց, որ խոսքը մոտ մեկ տարի առաջ տրված նույն պատասխանին է վերաբերվում:

⇨ էջ 3

Արմավիրի մարզպետի տեղակալ Արամ Գրիգորյանը, որը պաշտոնի է նշանակվել 2025 թվականի հոկտեմբերի 28-ին, պետական համակարգում անցած ճանապարհ ունի, դրան զուգահեռ՝ լուրջ ունեցվածք: Մասնավորապես, Գրիգորյանը 1995-2024 թվականներին ծառայել է Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունում, այնուհետեւ աշխատել Մեծամորի համայնքապետարանում՝ նախ որպես համայնքի ղեկավարի օգնական, ապա՝ խորհրդական: Ավելի ուշ դարձել է նաեւ Արմավիրի մարզպետի խորհրդական, իսկ 2025 թվականի աշնանից արդեն զբաղեցնում է փոխմարզպետի պաշտոնը: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց պաշտոնյայի 2025 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիրը եւ պարզեց, թե ինչ ունեցվածք ու եկամուտներ ունի մարզպետի տեղակալը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՐՄԱՆՈՒՄԸ»

ArmLur.am-ի զրուցակիցը Վանաձորի նախկին քաղաքապետ Մամիկոն Ասլանյանն է:

-Պարոն Ասլանյան, գտնվելով Հակակոռուպցիոն դատարանի դիմաց՝ Ձեր աջակցությունն եք հայտնում ազգային բարերար Սամվել Կարապետյանին: Դուք եւս եղել եք քաղբանտարկյալ: Այս համատեքստում ինչ սպասելիքներ ունեք Սամվել Կարապետյանի դատական գործից:

-Ցավոք սրտի, Հայաստանի Հանրապետությունը վերջին տարիներին ակնառու նեգատիվ հաջողություններ է գրանցել քաղբանտարկյալների, ապօրինի կալանավորումների, քաղաքական հաշվեհարդար տեսնելու նպատակով տարբեր քրեաիրավական ճնշումների, այդ թվում նաեւ իմ նկատմամբ եւ վերջերս ավելի ակնառու Սամվել Կարապետյանի նկատմամբ հետապնդում սկսելով: Այդ կոնտեքստում ես տեսնում եմ, որ իշխանությունները պիտի հասկանան, որ բռնաճնշումները ամենալավ ու ամենաճիշտ ճանապարհը չեն իրենց հետընթացը ճիշտ կազմակերպելու համար, որովհետեւ, այսպես թե այնպես, իրենք գնալու են եւ ճիշտ կլինի՝ իրենք գնան օրինական ճանապարհով եւ ոչ թե ցասման, պայքարի, այլ մեթոդների ճանապարհով, որովհետեւ հասարակության մեջ օրըստօրե այդ շղարշը խորքային առումով, անարդարության զգացողությունը նստած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների գերակշիռ մասի մոտ, իսկ մեր ժողովուրդը կարող է հացի համար չկռվել, ջրի համար չպայքարել, բայց հանուն արդարության, անարդարության դեմ կարող է բողոքել, եւ մենք բազմիցս տեսել ենք ի թիվս այլ անարդարություններ: Պետք է նշեմ նաեւ, որ մեր նկատմամբ լայն կիրառվում է պատմական անարդարության սերմանումը, որը ամեն օր տարբեր ձեւախեղումներ է ընդունում: Կարծում եմ, ամեն ինչ պետք է ունենա իր բավարար չափն ու սահմանը, անգամ, նեգատիվը:

-Ընդդիմությունը նշում է, որ այսօր Հայաստանում կան 50-ից ավելի քաղբանտարկյալներ, մինչդեռ ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը վերջերս նշեց, որ ՀՀ-ում քաղբանտարկյալ չկա: Ձեր գնահատականը:

-Որեւէ դիկտատուրական երկրում որեւէ պետական պաշտոնյա, եթե ընդունի, որ իր երկրում կան քաղբանտարկյալներ, հետեւաբար, ինքը պիտի մուտք չունենա որեւէ միջազգային կառույց, որեւէ մարդու իրավունքների պաշտպանության ֆորում, Եվրոպական միություն: Հետեւաբար, ամեն ինչ պետք է անել, որ այդ շղարշը ցրեն՝ ամենքին մի պիտակ կպցնելով:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔՊ-Ն ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Է ԳՆՈՒՄ

Քաղաքականության մեջ երբեմն զարգացումները այնքան արագ են փոխվում, որ երեկվա կոշտ հակամարտությունները մեկ օրում կարող են վերածվել ժպիտների եւ համատեղ պարերի:

Հենց նման պատկեր է այսօր իշխող թիմում՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արփի Դավոյանի եւ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի հարաբերություններում: Հիշեցնենք, որ դեռ 2025 թվականի հունիսին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Դավոյանը փորձել էր սեւացնել Ավինյանին՝ նրան մեղադրելով կոռուպցիոն պատմությունների մեջ: Փաշինյանը, սակայն, պահանջել էր օդում մեղադրանքներ չինչեցնել եւ ներկայացնել կոնկրետ փաստեր: Արփի Դավոյանը որոշակի զեկույց էր ներկայացրել Ավինյանի դեմ, սակայն դրանից հետո հայտնվել էր իշխանական թիմի «սեւ ցուցակում»:

Ավինյանն իր հերթին չափազանց կոշտ էր արձագանքել՝ Դավոյանին մեղադրելով անհիմն զրպարտության եւ սուտ տեղեկություններ տարածելու մեջ: Ավելին՝ անգամ լուրեր տարածվեցին, որ սպառնալից հաղորդագրություն էր ուղարկել, որտեղ

հնչել էր կոշտ ձեւակերպում. «Ոչնչացնելու եմ քեզ...»:

Իրավիճակը բարկացրել էր նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Բայց քաղաքականությունը, ինչպես երեւում է, ոչ միայն հակամարտությունների, այլեւ արագ հաշտությունների աշխարհ է: Նախօրեին համացանցում հայտնված տեսանյութը դրա մասին էր: ՔՊ անդամները «ուրախ ավտոբուսի մեջ» պարում են, եւ կադրերում կողք կողքի երեւում են ոխերիմ թշնամիներ Ավինյանն ու Դավոյանը: Նրանք ժպտում են, պարում եւ միասին ուրախանում: Այսպիսով, զազրելի կոռուպցիայի եւ զրպարտության էջը փակված է:

ՔՊ-ԻՑ ՀԵՌԱՑԱԾԸ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը ՀՀ նախագահի կողմից առաջադրվել է ՍԴ դատավորի պաշտոնում: Նրան ընտրելու է Ազգային Ժողովը: Սա հիշեցնում է այն դրվագը, երբ Սերժ Սարգսյանի իշխանության օրոք մեկ այլ կուսակցական՝ Հրայր Թովմասյանը, վայր դրեց կուսակցական անդամատոմսն ու դարձավ ՍԴ դատավոր, ապա բարձր դատարանի նախագահ: Factor.am-ն այս առնչությամբ փորձեց հարցեր ուղղել ՔՊ-ից դուրս գալու մասին հայտարարած Վլադիմիր Վարդանյանին՝ արդյո՞ք իր անաչառությունը կասկածի տակ չի դրվի: «Քանի որ ես անցումային կարգավիճակում եմ, ամենայն հարգանքով, բայց որեւէ բան չմեկնաբանեմ»,- ասաց Վլադիմիր Վարդանյանը: Տարբեր տեղեկություններով՝ Վլադիմիր Վարդանյանն ու ՍԴ նախագահ Արման Դիլանյանը քավոր-սանիկական կապեր ունեն: Փորձեցինք ճշտել այս տեղեկության իսկությունը եւ մեկնաբանություն խնդրել՝ արդյո՞ք ընտրվելու դեպքում սա կաշկանդող հանգամանք չի լինելու: «Չեմ պատասխանի, անցումային կարգավիճակում եմ»,- կրկնեց նա: Դիտարկմանը, որ չի հերքում քավոր-սանիկական կապերի մասին տեղեկությունը, Վարդանյանն ասաց. «Ես պարոն Դիլանյանին ճանաչում եմ բավականին երկար, բայց, խնդրում եմ, այս փուլում մեկնաբանություն չեմ տալիս»:

ԻՐԱՆՈՒՄ 202 ԵՐԵԽԱ Է ՄԱՀԱՑԵԼ

Իրանի առողջապահության նախարարության տվյալներով՝ ամերիկա-իսրայելական հարձակումների հետեւանքով Իրանում զոհվել է առնվազն 202 երեխա, որոնցից 12-ը՝ հինգ տարեկանից ցածր: Զոհվել է նաեւ 223 կին, նրանցից երեքը հղի են եղել: Բացի այդ, ԱՄՆ-ի եւ Իսրայելի հասցրած հարվածների հետեւանքով երկրում վնասվել է առնվազն 153 առողջապահական հաստատություն, որոնցից 56-ը առողջապահական համալիր ծառայությունների կենտրոններ են, հայտնում է Tasnim լրատվական գործակալությունը: Բժշկական համալսարանները նույնպես տուժել են: «Քերմանշահի համալսարանն ամենաշատ վնասն է կրել՝ 42 վնասված մասնաշենքով, որին հաջորդում է Սպահանը՝ 19 մասնաշենքով», - նշում է գործակալությունը: «Ցավոք, այս միջադեպերի հետեւանքով զոհվել է 10 մարդ, իսկ 248 մարդ բուժօգնություն է ստացել եւ դուրս է գրվել», - հաղորդում է Tasnim-ը:

3 ԿԱՆԱՆՑՈՎ ՓՈՐՁԵԼ Է ՓՐԿԵԼ ԱՄՈՒՍՆՈՒՆ

ArmLur.am-ը Սեյրան Օհանյանի կնոջից՝ Ռուզաննա Խաչատրյանից հետաքրքրվեց, թե վերջինս ինչպես է փորձել փրկել իր եւ ամուսնու ունեցվածքը: Մեղադրանքը նրա նկատմամբ հիմա հենց այդ հոդվածով է, որ նա ամուսնու ունեցվածքն է փորձել փրկել 3 կանանցով:

Սեյրան Օհանյանի կնոջը՝ Ռուզաննա Խաչատրյանին, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2021 թվականի դեկտեմբերի 13-ից 2022 թվականի հունիսի 23-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպել եւ ղեկավարել է Աննա Բադալյանի եւ Կարինե Մարգարյանի կողմից քաղաքացիական գործով ապացույցներ կեղծելը, կազմակերպել եւ ղեկավարել է Աննա Բադալյանի կողմից քաղաքացիական գործով արգելանքի տակ գտնվող գույքերի նկատմամբ ապօրինի գործողությունների կատարումը, որը դրսեւորվել է այդ գույքերն ապօրինի օտարելով, ինչպես նաեւ, 2022 թվականից մինչեւ 2024 թվականն ընկած ժամանակահատվածում, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, իր կողմից ներկայացված հայտարարագրերում թաքցրել է հայտարարագրման ենթակա թվով 2 անշարժ գույքերի վերաբերյալ տվյալները, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքերի չհայտարարագրմանը:

Աննա Տիգրանի Բադալանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2021 թվականի դեկտեմբերի 13-ից 2022 թվականի հունիսի 23-ն ընկած ժամանակահատվածում մորաքրոջ՝ Ռուզաննա Խաչատրյանի կազմակերպմամբ եւ ղեկավարմամբ Կարինե Մարգարյանի հետ համակատարմամբ քաղաքացիական գործով կեղծել են ապացույցներ, ինչպես նաեւ Ռուզաննա Խաչատրյանի կազմակերպմամբ եւ ղեկավարմամբ, Կարինե Մարգարյանի օժանդակությամբ քաղաքացիական գործով արգելանքի տակ գտնվող գույքերի նկատմամբ կատարել է ապօրինի գործողություններ, որը դրսեւորվել է այդ գույքերն ապօրինի օտարելով:

Կարինե Հովսեփի Մարգարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2021 թվականի դեկտեմբերի 13-ից 2022 թվականի հունիսի 23-ն ընկած ժամանակահատվածում Ռուզաննա Խաչատրյանի կազմակերպմամբ եւ ղեկավարմամբ Աննա Բադալյանի հետ համակատարմամբ քաղաքացիական գործով կեղծել են ապացույցներ, ինչպես նաեւ Ռուզաննա Խաչատրյանի կազմակերպմամբ եւ ղեկավարմամբ օժանդակել է Աննա Բադալյանի կողմից քաղաքացիական գործով արգելանքի տակ գտնվող գույքերի նկատմամբ ապօրինի գործողություններ կատարելուն, որը դրսեւորվել է այդ գույքերն ապօրինի իրեն օտարելով:

Սակայն Ռուզան Խաչատրյանը հերքեց մեղադրանքը ծայրից ծայր՝ ասելով, որ սարքած է:

ՀԱՐՑԵՐ

ՄԵԿ ՏԱՐՎԱ ԼՌՈՒԹՅՈՒՆ ԱՐՓԻ ԴԱՎՈՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ

Արդեն մեկ տարի է՝ «Ժողովուրդ» օրաթերթը հետեւողականորեն փորձում է հասկանալ, թե ինչ փուլում է գտնվում ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արփի Դավոյանի հետ առնչվող քրեական վարույթը, որը 2023-ից քննվում է: Սակայն ստացվող պաշտոնական պատասխանները ոչ թե պարզաբանում են իրավիճակը, այլ ավելի շատ հարցեր են առաջացնում:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 2018 թվականին ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունում քննվել է մի գործ, որով անցել է Արփի Դավոյանը: Նախնական տեղեկություններով՝ նա ՍՊԸ-ներ է հիմնադրել, ինչոր ներկրումներ արել, ապա խաբել պետությանը: Նա 2018 թվականի ապրիլից հետո ՊԵԿ քննչականում անգամ հարցաքննվել է: «Ժողովուրդ» օրաթերթի վերջին հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը տեղեկացրել է, թե արդեն իսկ նույնաբովանդակ հարցման պատասխան տրվել է նախկինում:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց ստացած բոլոր պաշտոնական գրությունները եւ պարզեց, որ խոսքը մոտ մեկ տարի առաջ տրված նույն պատասխանին է վերաբերում, որի բովանդակությունը բառացիորեն հետեւյալն էր. «ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակում քաղաքացի Արփի Դավոյանը հարցաքննվել է որպես վկա եւ այլ դատավարական կարգավիճակ չի ունեցել: Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է»:

Սա նշանակում է, որ մեկ ամբողջ տարվա ընթացքում գործի ընթացքի վերաբերյալ որեւէ նոր տեղեկություն չի ներկայացվում, եւ փաստացի նույն ձեւակերպումը շարունակում է կիրառվել այսօր էլ: Մինչ այժմ հանրությանը չի ներկայացվել որեւէ տեսանելի առաջընթաց. Արփի Դավոյանն ի վերջո ինչ է արել, ինչպես է խաբել պետությանը, խաբել է, թե չի խաբել: Գործով ո՛չ նոր մեղադրյալներ կան, ո՛չ նոր դատավարական կարգավիճակներ ունեն մարդիկ, ո՛չ էլ ավարտական որոշում կա: Միայն նույն ձեւակերպումը՝ «նախաքննությունը շարունակվում է»:

Եւ այս առումով ուշագրավ է համադրել հանրային փաստերը քրեական վարույթի հետ: Մասնավորապես, վերջին ամիսներին ԱԺ նիստերի ժամանակ պատգամավոր Արփի Դավոյանը հաճախ է հրապարակային կերպով գովաբանում ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին: Միաժամանակ նա ունի ջերմ հարաբերություններ ՀՀ ԱԱԾ տնօրեն Անդրանիկ Սիմոնյանի հետ: Ուստի դժվար չէ կռահել, թե ինչու վարույթը, 2023-ից սկսած, տեղից չի շարժվում: Ի վերջո, խոսքը շարքային քաղաքացու մասին չէ, այլ իշխանական խմբակցության գործող պատգամավորի, որը փաստացի հովանավորվում է ուժայինների կողմից:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՀԱՆՋԵՑ ՈՒ ՀԵՌԱՑԱՎ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ մարտ 16, 2026 թվակիր Հայրապետական տնօրինությամբ Վայոց Ձորի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը ազատ է կացուցվել թեմական առաջնորդի պաշտոնից եւ կոչվել հանգստյան՝ իր գրավոր եւ բանավոր դիմումների հիման վրա: Հայրապետական տնօրինությամբ Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար եպիսկոպոս Հակոբյանը համատեղության կարգով նշանակվել է Վայոց Ձորի թեմի առաջնորդական տեղապահ՝ իրականացնելու թեմական առաջնորդի պարտականությունները: Հիշեցնենք, որ Գերագույն հոգեւոր խորհրդի կազմից հեռացված Տեր Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը, Տեր Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանը եւ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը այն 10 բարձրաստիճան հոգեւորականների թվում են, որոնք պահանջում են Ամենայն հայոց կաթողիկոսի հրաժարականը: Դեկտեմբերի 18-ին բարձրաստիճան 10 հոգեւորականները Ամենայն Հայոց կաթողիկոսի հրաժարականի պահանջով նամակը փոխանցել են Մայր Աթոռի քարտուղարությանը:

ՎԱՐՈՒՅԹ՝ «ՄԵՐ ՁԵՎՈՎ»-ԻՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում քննվում է ամուսինների կողմից բռնություն գործադրելու սպառնալիքով անձի ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթը: Նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2026 թվականի մարտի 9-ին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի աշխատակից Վ.Կ.-ն եւ նրա կինը՝ Վ.Դ.-ն, ժամանելով Ա.Հ.-ի բնակարան, վերջինիս ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու նախնական եւ միասնական դիտավորությամբ, հիշյալ տան բակում՝ աստիճանների վրա առաջացած խոսակցության ժամանակ, խմբի կազմում փոխլրացնելով միմյանց գործողությունները, Ա.Հ.-ի նկատմամբ բռնություն գործադրելու եւ գույքը վնասելու, ոչնչացնելու սպառնալիքներ հնչեցնելով, հարկադրել են անձնագրով ժամանել Տաշիր համայնքում գործող «Մեր ձեւով» կուսակցության գրասենյակ, հաշվառվել որպես նշված կուսակցության անդամ, իսկ առաջիկա՝ 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի հերթական ընտրություններին ընտրել իրենց թեկնածուին, հակառակ պարագայում սպառնացել են պայթեցնել նրա բնակարանն այնպես, որ այդ ամենը ներկայացվի որպես դժբախտ պատահար: Վ.Կ.-ի եւ Վ.Դ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը): Ամուսնու նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, իսկ կնոջ նկատմամբ՝ բացակայելու արգելքը, գրավը եւ վարչական հսկողությունը: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

ԲՅՈՒՋԵ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԵՐԱԾԱԽՄԱՆ ՈՒ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ

«ԼՈՒՅՍ» հիմնադրամը վերլուծել է Երեւան քաղաքի 2025թ. բյուջեի կատարողական հաշվետվությունը:



Այսպես. բյուջեի ընդհանուր եկամուտների փաստացի մեծությունը՝ 148.5 մլրդ դրամ, 27.2%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշին, սակայն 6.8%-ով պակաս է հաստատված բյուջեով պլանավորված ցուցանիշից: Աճն ապահովվել է «հարկերի եւ տուրքերի» եւ «այլ եկամուտների» հաշվին: Երեւան քաղաքի բյուջեի եկամուտների հավաքագրմանը զգալիորեն նպաստել են մի քանի օրենսդրական՝ հանրությանը ոչ հաճո փոփոխություններ: Մասնավորապես, հարկերի եւ տուրքերի աճը հիմնականում պայմանավորված է գույքահարկի բազայի նախորդ տարվա համեմատ 50%-ով բարձրացմամբ, 2025 թվականի ընթացքում ավարտական ակտ չունեցող բազմաբնակարան եւ այլ շենքերը որպես մեկ միավոր ավարտված շինություն դիտարկելու հետեւանքով հաշվարկված անշարժ գույքի հարկի վճարումներով, տարվա ընթացքում առաջացած նոր գույքային միավորների համար անշարժ գույքի հարկի վճարումներով, ինչպես նաեւ շինարարության տուրքերի ավելացմամբ՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալի ավելացմամբ: Այլ գույքային հարկերի ավելացումը պայմանավորված է փոխադրամիջոցների քանակի ավելացմամբ: Իսկ այլ եկամուտներում վարչական գանձումների հիմնական մասը կազմող տեղական վճարների գծով փաստացի եկամուտների աճը հիմնականում ապահովվել է ի հաշիվ բնակելի նշանակության շինությունների համար աղբահանության վճարների հաշվարկման մեթոդաբանության փոփոխման:

Ավտոկայանատեղիում կայանման համար գանձված վճարները, ընդհակառակը, 2024-ի համեմատ նվազել են 8.4%-ով: Չնայած 2024-ի հունվարի 1-ից ավտոկայանման վճարները 2-ից 13.3 անգամ աճել են, դրանց դիմաց 2025-ի փաստացի հավաքագրումները 2023-ի ցուցանիշից ընդամենը 62.7%-ով են ավելի: Նկատի ունենալով, որ հիշյալ ժամանակահատվածում փողոցային ավտոկայանատեղերի շոշափելի բեռնաթափում չի արձանագրվել, դժվար է հավատալ, որ ավտոկայանման վճարների հավաքագրման այդպիսի համեմատաբար «համեստ» աճի հիմնական պատճառը կայանվող ավտոմեքենաների թվի կրճատումն է:

Երեւան քաղաքի 2025թ. բյուջեի ծախսերը՝ 140.8 մլրդ դրամ, թերակատարվել են ինչպես հաստատված, այնպես էլ ճշտված պլանի նկատմամբ: Թերակատարումը վերաբերում է թե՛ ընթացիկ եւ թե՛ կապիտալ ծախսերին: Տոկոսային արտահայտությամբ կապիտալ ծախսերի գծով թերակատարումն ավելի քան 4.5 անգամ գերազանցում է ընթացիկ ծախսերի թերակատարմանը: Ծախսերի կազմում առանձնակի ուշադրություն է գրավում պարգեւատրումների, դրամական խրախուսումների եւ հատուկ վճարների նպատակով կատարված ծախսերը, որոնք վերջին երեք տարիների ընթացքում ավելի քան տասնապատկվել են եւ 2025-ին կազմել 2.8 մլրդ դրամ: Ընդ որում, դրանց փաստացի մեծությունը հաշվետու տարում 3.4 անգամ գերազանցել է հաստատված բյուջեով պլանավորված ցուցանիշին: Գործառնական դասակարգմամբ բոլոր ծախսային ուղղությունների գծով առկա է ճշտված պլանի նկատմամբ թերակատարում:

Արձանագրված զգալի թերակատարումները եւս մեկ անգամ ապացուցում են, որ բյուջետային պլանավորումը շարունակում է մնալ քաղաքային իշխանությունների ամենաթույլ կողմերից մեկը: Կենսական կարեւորություն ունեցող ծրագրերից շատերի գծով հաստատված՝ բյուջեով նախատեսված ծախսերի նույնիսկ կեսը չի կատարվել: Այդպիսի ծրագրերից կարելի է առանձնացնել «-Կամրջային կառուցվածքների վերականգնում եւ պահպանումը», «Մայրուղիների եւ փողոցների վերակառուցում եւ հիմնանորոգումը», «Տրանսպորտային համակարգի արդիականացումը», «Երեւանի քաղաքային լուսավորության ծրագիրը», Երեւանի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված երեք ծրագրերը եւ այլն:

Խիստ մտահոգիչ է պատկերը հանրային մեծ հնչեղություն ունեցող որոշ ծրագրերի գծով: Հատկանշական է, որ «Երեւանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում» ծրագրի շրջանակներում «Աջափնյակ» կայարանի կառուցման համար 2025-ի բյուջեով հատկացված 9.6 մլրդ դրամը ճշտված պլանով ավելի քան 7 անգամ նվազեցվել է, սակայն, նույնիսկ այդ պարագայում, կատարողականը կազմել է ընդամենը 56.2%: Ընդ որում, փաստացի կատարված 0.8 մլրդ դրամի ծախսերն ամբողջությամբ վերաբերում են միայն նախագծանախահաշվային փաստաթղթերի դիմաց վճարմանը, որը դեռեւս 2024-ի բյուջեով էր նախատեսված:

Չնայած «Պետական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում եւ հիմնանորոգում (պատվիրակված լիազորություններ)» ծրագրի իրականացման ծախսերի համար հաստատված պլանով նախատեսված 3.0 մլրդ դրամը ճշտված պլանով քառակի նվազեցվել է, այնուամենայնիվ, նույնիսկ այդ նվազեցված պլանը թերակատարվել է՝ այն պարագայում, երբ գործող կառավարության գործունեության ծրագրի կարեւորագույն թիրախներից մեկը 300 դպրոցների եւ 500 մանկապարտեզների կառուցումն ու հիմնանորոգումն է:

2025-ին Երեւան քաղաքի բյուջեն փաստացի հավելուրդ է ունեցել՝ 7.7 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 8.7 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Ընդ որում, բյուջեի պակասուրդը հաստատված պլանով ծրագրված մեծության համեմատ ճշտված պլանով 100-պատիկ ավելացվել է, սակայն պակասուրդի փոխարեն փաստացի արձանագրվել է դրան մոտավորապես համադրելի հավելուրդ: Թեեւ հաշվետվության սկզբնամասում փորձ է արված բյուջեի ցածր կատարողականին տալ հնարավորինս նպաստավոր բացատրություն՝ «նախատեսված եւ փաստացի ծախսված գումարների շեղումները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով եւ պայմանագրային պարտավորությունների անցումներով», սակայն նույն հաշվետվության տեքստում, հաջորդիվ նշված է, որ «ծրագրված եւ փաստացի ցուցանիշների շեղումները հիմնականում պայմանավորված են Երեւանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակներում իրականացվող ծրագրերի ամբողջական կամ մասամբ չկատարմամբ»: Վերջինս խոսում է քաղաքային իշխանության կառավարման ոչ բավարար մակարդակի մասին:

Պատրաստեց ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՌՈԲՍՈՆԻ ԿՆՈՋ ՄԵՔԵՆԱՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ իրավապահները հայազգի գործարար Ռուբեն Թաթուլյանի, որն ավելի հայտնի է որպես Ռոբսոն, կնոջ մեքենան առգրավել են ու տարել են հատուկ պահպանվող տարածք:

shamshyan.com-ը հայտնել էր, որ Կոտայքի պարեկները հայտնաբերել ու հատուկ պահպանվող տարածք են տեղափոխել Ռուսաստանում եւ Հայաստանում հայտնի օլիգարխի ընտանիքին պատկանող կասկածելի «Mercedes»-ը: Տեղում պարզվում է, որ վարորդը հայկական վարորդական իրավունքի վկայական չունի, իսկ ավտոմեքենան գտնվել է հետախուզման մեջ, թեեւ վարորդը հայտնել է, որ այն այլեւս հետախուզման մեջ չէ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վարորդը Ռուսաստանում եւ Հայաստանում հայտնի հայ օլիգարխներից մեկի ազգականն է, իսկ այդ օլիգարխի նկատմամբ ժամանակին հետախուզում էր հայտարարվել Ռուսաստանի կողմից, եւ ՌԴ-ն պահանջում էր, որ Հայաստանը նրան արտահանձնի Ռուսաստանին, ինչը հայկական կողմը մերժել էր: Արդյունքում, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ մեքենան, որը առգրավել են, հայազգի գործարար Ռոբսոնի կնոջ՝ Կարինե Թաթուլյանի մեքենան է եղել:

Հայտնել էինք, որ 2025 թվականի նոյեմբերի 7-ին Հայաստանում ձերբակալել էին հայտնի գործարար Ռոբսոնին՝ Ռուբեն Թաթուլյանին: ՆԳՆ-ից պաշտոնապես հայտնել էին, որ քրեական ոստիկանության ծառայողները նշված անձին հայտնաբերել եւ ձերբակալել են: Նրա հայտնաբերման մասին տեղեկատվությունը պատշաճ կարգով փոխանցվել է դատախազությանն ու հետախուզումը նախաձեռնողին: Ավելի ուշ գործարարը ազատ էր արձակվել:

Իսկ ով է հայտնի գործարար Ռուբեն Թաթուլյանը, որը առավել հայտնի է Ռոբսոն անունով: Նշենք, որ նա ՌԴ պետդումայի պատգամավոր Ալեքսանդր Կարելինի օգնականն է եւ Սոչիում ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահը: Ռուսական առաջատար լրատվամիջոցները հայտնում են, որ Ռ. Թաթուլյանի գործունեության մասին վաղուց առասպելներ են պտտվում: Լուրեր են շրջանառվում, թե Սոչիում եւ ընդհանուր երկրամասում տեղի չի ունենում որեւէ բան, որը Ռոբսոնի սրտով չլինի. ո՛չ Սոչիի քաղաքապետը, ո՛չ էլ նույնիսկ երկրամասի ղեկավարը ոչինչ չեն կարող անել, եթե Թաթուլյանը դեմ լինի: «Նա Սոչիի՝ ստվերում գտնվող «տերը» չէ, նա պարզապես տերն է»,- այսպես են արտահայտվում Թաթուլյանի մասին տեղացիները:

Հայազգի գործարարն իր ուրույն դիրքով առանձնանում է Սոչիում հյուրանոցային բիզնեսում ներդրումներ կատարողների մեջ: Բացի «Գորուն» պանսիոնատից՝ Թաթուլյանի ընկերություններին են պատկանում մի քանի կոմերցիոն օբյեկտներ, որոնց ընդհանուր մակերեսը հասնում է 70 հազար քառ. մ-ի: Դրանցից ստացած տարեկան եկամուտը հասնում է 850-900 մլն ռուբլու: Թաթուլյանը Սոչիում 7000 քառ. մ մակերեսով առեւտրի կենտրոն ունի, որը կոչվում է «Թաթուլյան»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Մարտի 9-ից 15-ը ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնում գրանցվել է 644 դեպք, որից 214-ը՝ արտակարգ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ մոտ ժամանակներս արցախցիները պատրաստվում են բողոքի ակցիաներ իրականացնել: Մեզ հայտնում են, որ մի քանի օր է՝ Արցախի տարբեր հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ հանդիպում-քննարկումներ են ունենում՝ հասկանալու, թե երբ եւ ինչպես են սկսելու նոր շարժումը:

Մեզ հայտնի դարձավ, որ նրանք ցանկանում են ձեւավորել մի օրակարգ, որը կվերակենդանացնի Արցախյան շարժումը: Շարժմանը ներգրավված են լինելու նոր ուժեր, որոնք էլ նոր մոտեցումներով կկազմակերպեն շարժումը: «Սա լինելու է ռեստարտը Արցախյան շարժման: Վերջին ժամանակահատվածում հաճախ ենք քննարկում՝ ինչ անել, հատկապես Հայաստանի գործող իշխանության՝ Արցախի վերաբերյալ վերջին հայտարարությունից հետո: Նրանց ցավալի տեղը հանրային ճնշումն է: Մենք էլ այդ կերպ ենք պատրաստվում խոսել նրանց հետ»,- ArmLur.am-ին փոխանցեցին արցախցիները:

Արցախի հասարակական կազմակերպություններից մեզ փոխանցեցին, որ առայժմ քննարկումներ են, հստակ որոշում կայացնելու դեպքում հանդես են գալու համատեղ հայտարարությամբ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԶՐՈՒՅՑԸ ԸՆԴՀԱՏՎԵԼ Է

Ռուբեն Վարդանյանի ընտանիքը հայտարարություն է տարածել. «Մարտի 13-ին ընտանիքի հետ հեռախոսազրույցի ժամանակ Ռուբեն Վարդանյանը փորձել է հրապարակային կոչով դիմել Ադրբեջանի օմբուդսմեն Սաբինա Ալիեւային, բայց հեռախոսազրույցը հարկադրաբար ընդհատվել է: Ռուբեն Վարդանյանը ստիպված է եղել դիմել այս քայլին, քանի որ նախորդ 10 օրերին օմբուդսմենի հետ փաստաբանի միջոցով, գրավոր դիմումներով եւ հեռախոսազանգերով կապ հաստատելու փորձերը որեւէ արդյունք չեն տվել: Դատավարություններն ավարտվել են մեկ ամիս առաջ, սակայն ո՛չ Ռուբենը, ո՛չ էլ, մեր տեղեկություններով, մյուս հայ բանտարկյալներն իրենց պաշտոնական դատավճիռների տեքստերը որեւէ լեզվով՝ ռուսերեն, հայերեն կամ ադրբեջաներեն, դեռ չեն ստացել: Նրանք չգիտեն, թե ինչ հոդվածներով են դատապարտվել, երբ կամ ուր են նրանց տեղափոխելու: Մենք խորապես մտահոգված ենք ստեղծված իրավիճակով: Նրա եւ մյուս հայ գերիների կացության մասին արժանահավատ տեղեկությունների բացակայությունը եւ Ադրբեջանում մարդու իրավունքների անկախ մեխանիզմների վերացումը, այդ թվում՝ երկրից Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի հեռացումը, բոլոր գերիներին զրկում են ինստիտուցիոնալ որեւէ պաշտպանությունից: Մենք նաեւ մտավախություն ունենք, որ նույնիսկ կարճ հեռախոսազրույցները՝ կապի պահպանված միակ միջոցը, կարող են դադարեցվել: Մենք հրապարակում ենք Ադրբեջանի օմբուդսմեն Սաբինա Ալիեւային ուղղված Ռուբենի դիմումի աուդիոձայնագրությունը, որը նրան թույլ չեն տվել ավարտել: Հուսով ենք՝ այն կհասնի հասցեատիրոջը»:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՁԳԱԾ ԴԱՏԱՎՈՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Սամվել Կարապետյանի տնային կալանքը երկարաձգած Հակակոռուպցիոն դատարանի 32-ամյա դատավոր Վարդգես Ստեփանյանը բավական հետաքրքիր գույքային տվյալներ է ներկայացրել իր հայտարարագրում: ArmLur.am-ը ուսումնասիրեց նրա գույքի, եկամուտների եւ ֆինանսական պարտավորությունների տվյալները եւ պարզեց, թե ինչ ունեցվածք ունի Կարապետյանի գործով որոշում կայացրած երիտասարդ դատավորը:



Վարդգես Ստեփանյանը դատավոր է նշանակվել 2023 թվականի նոյեմբերի 20-ին եւ պաշտոնավարում է Հակակոռուպցիոն դատարանում:

ArmLur.am-ի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դատավորը ունի 2 բնակարան Երեւանում, մի քանի բանկային հաշիվներում գումարներ, ինչպես նաեւ հիփոթեքային վարկային պարտավորություն:

2 միավոր անշարժ գույք

Ստեփանյանը հայտարարագրել է 2 միավոր անշարժ գույք Երեւան քաղաքում, որոնք ներկայացված են որպես 90 եւ ավելի օր փաստացի տիրապետվող անշարժ գույք:

Հանձնված եւ վերադարձված փոխառություններ

- 4,424,000 դրամ - Մետրում Ինվեստ
- 34,334,000 դրամ - Մետրում Ինվեստ

Բանկային հաշիվների մնացորդներ

- 13,885 դրամ
- 144,710 դրամ
- 5,361,828 դրամ

Կանխիկ դրամ

- Տարվա սկզբին՝ 190,000 դրամ
- Տարվա վերջում՝ 0 դրամ

Հաշվետու տարվա եկամուտներ

- Այլ եկամուտ - Արդշինբանկ 127,011 դրամ
- Այլ եկամուտ - ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ դատական դեպարտամենտ 300,000 դրամ
- Քաղաքացիաիրավական պայմանագրից եկամուտ - Արդարադատության ակադեմիա 19,500 դրամ
- Աշխատավարձ - ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ դատական դեպարտամենտ 14,454,266 դրամ
- Ստացված փոխառություն - Ամերիաբանկ 34,334,000 դրամ

Ընդհանուր գումար

- 49,234,777 դրամ

34,334,000 դրամ վարկային պարտավորություն

Վարկային պարտավորությունների մասով Վարդգես Ստեփանյանը հայտարարագրել է 34,334,000 դրամ փոխառության մնացորդ, որի տոկոսադրույքը կազմում է 13%: Նշված վարկը հիփոթեքային է, իսկ հիփոթեքի առարկան բնակարան է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ռուբինյանց փողոցում:

Հիշեցնենք, որ Սամվել Կարապետյանի նկատմամբ դատարանը խափանման միջոց էր կիրառել տնային կալանքը, որը դատարանի որոշմամբ երկարաձգվել է: Կարապետյանը կալանավորվել էր հունիսի 18-ին: Նրա նկատմամբ քրեական վարույթ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 472-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ իշխանությունը զավթելու հրապարակային կոչերի հատկանիշներով: Ըստ Քննչական կոմիտեի հաղորդագրության՝ գործարարը զանգվածային լրատվամիջոցի միջոցով տված հարցազրույցում հնչեցրել է կոչեր, որոնք ուղղված են եղել իշխանությունը զավթելուն: Հավելենք, որ Սամվել Կարապետյանը չի ընդունում մեղադրանքը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐՈՍՅԱՆԻ «ՄԵԳԱՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԳԻԾԸ ՍԵՂԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ իշխանության ներսում ակտիվ քննարկվում է առողջապահության եւ սոցիալական ոլորտների կառավարման նոր մոդելի ներդրումը, որի շրջանակում պետք է միավորվեն առողջապահության եւ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունները:

Կառավարությունից «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններով՝ այդ նախաձեռնության հիմնական շահառուներից մեկը աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար, առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանն է, որը ակտիվ աշխատում է, որպեսզի ընտրություններից հետո ձեւավորվելիք կառավարությունում հենց ինքը զբաղեցնի միավորված գերատեսչության ղեկավարի պաշտոնը:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների՝ քննարկվող նախագծի վրա աշխատանքները արդեն բավական առաջ են գնացել եւ մտնում են վերջնական փուլ: Նախագծի հեղինակները պնդում են, որ սոցիալական քաղաքականությունն ու առողջապահությունը պետք է կառավարվեն մեկ կենտրոնից՝ համակարգը «ամբողջությամբ վերափոխելու» նպատակով: Սակայն կառավարության ներսում այս գաղափարը միանշանակ չի ընդունվում: Իշխանության ներսում արդեն նկատվում են դժգոհություններ Թորոսյանի ակտիվությունից եւ նախաձեռնությունների ձեւից:

Կառավարության ներսից «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցում են, որ որոշ պաշտոնյաներ այդ գործընթացը բնութագրում են որպես Թորոսյանի հերթական փորձ՝ վերահսկել առավել մեծ ոլորտ: Ու եթե այս սցենարը կյանքի կոչվի, ապա ներկայիս առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը կհեռանա պաշտոնից, նրան այլ պաշտոն կառաջարկվի: Իսկ նրա տեղակալ Լենա Նանուշյանը կմնա համակարգում, քանի որ Թորոսյանի մտերիմն է:

Հիշեցնենք, որ Արսեն Թորոսյանը առողջապահության նախարարի պաշտոնը զբաղեցրել է 2018-2021 թվականներին՝ հենց այն ժամանակահատվածում, երբ Հայաստանը, ինչպես ողջ աշխարհը, բախվեց կորոնավիրուսի համավարակին: COVID-19-ի ծանր հետեւանքների եւ մահացության բարձր ցուցանիշների ֆոնին հանրային դաշտում նրա գործունեությունը հաճախ խիստ քննադատության էր ենթարկվում, եւ քաղաքական ընդդիմախոսները նրան անգամ «մահվան նախարար» էին անվանում:

Բացի այդ, կորոնավիրուսի ժամանակաշրջանի որոշ պետական գնումների եւ որոշումների վերաբերյալ հարուցված քրեական գործերի մի մասը դեռեւս քննվում է իրավապահ մարմիններում: Տարբեր դրվագներով գործեր կան թե՛ դատարանում, թե՛ նախաքննության փուլում՝ Հակակոռուպցիոն կոմիտեում, որոնք առնչվում են Արսեն Թորոսյանին եւ իր ընկերներին: Բայց Արսեն Թորոսյանի կարգավիճակը մեղադրյալ չի դառնում: Այսինքն՝ Ֆեմիդան չի կարողանում արդեն գլուխ հանել՝ ինչպես վարվել. կոռուպցիոն խայտառակ պատմություններ ու փաստեր քննվեցին, բայց պատասխանատուների մասով կաղում է իրավապահ համակարգը: Ով մտնում է դատարան, հագնում է արդարության ու անմեղության շապիկը եւ փորձում արդարանալ: Ու թերեւս այդպես էլ կավարտվի Փաշինյանի իշխանության ամենախոշոր կոռուպցիոն քրեական վարույթներից մեկը:

● *Հայաստանի Հանրապետությունում մարտի 9-ից 15-ը գրանցվել է ինքնասպանության փորձի՝ 12, կեղծ ահազանգի՝ 10 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ պարոն Անդրանիկ Գրիգորյանը մարտի 31-ից դադարեցնելու է գործունեությունը Բանկի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնում՝ իր նախաձեռնությամբ:

Բանկի Խորհուրդն իր անկեղծ երախտագիտությունն է հայտնում պարոն Գրիգորյանին՝ Կոնվերս Բանկում նրա ղեկավարման եւ Բանկի առաջնորդության գործում կարեւոր ավանդի համար:

Կոնվերս Բանկի Խորհրդի նախագահ Մարսելո Վենդեն նշել է. «Մեր երախտագիտությունն ենք հայտնում Անդրանիկ Գրիգորյանին առաջնորդության եւ Բանկի զարգացման գործում ունեցած կարեւոր ներդրման համար: Նրա կառավարման ընթացքում Կոնվերս Բանկը ամրապնդեց իր դիրքերը Հայաստանի ֆինանսական համակարգում, շարունակեց զարգացնել գործարար հարաբերությունները, զարկ տրվեց Բանկի տեխնոլոգիական փոխակերպմանը, ընդլայնվեցին հաճախորդների եւ ՀՀ տնտեսության աջակցությանը միտված պրոդուկտային առաջարկները: Այդ գործընթացում առանձնահատուկ շեշտադրում կատարվեց թվային պրոդուկտների եւ ծառայությունների զարգացման վրա: Անդրանիկ Գրիգորյանին մաղթում ենք նոր հաջողություններ իր հետագա նախաձեռնություններում»:

Կառավարման շարունակականությունն ապահովելու նպատակով Խորհուրդը Բանկի գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակել պարոն Հրանտ Հակոբյանին, ով ներկայում զբաղեցնում է Կոնվերս Բանկի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի եւ ֆինանսական տնօրենի պաշտոնները: Նշանակումն ուժի մեջ կմտնի ապրիլի 1-ից:

Խորհրդի նախագահը հավելել է. «Վերջին 10 տարիների ընթացքում Հրանտ Հակոբյանը եղել է Բանկի ղեկավար կազմի առանցքային անդամներից մեկը: Նրա նշանակմամբ Խորհուրդը նպատակ ունի ապահովել առաջնորդության շարունակականությունը եւ Բանկի զարգացման ռազմավարության հետեւողական իրականացումը»:

Կոնվերս Բանկի մասին

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ունիվերսալ բանկ է, որը գործում է Հայաստանում եւ տրամադրում է բանկային ծառայությունների լայն շրջանակ ֆիզիկական անձանց, փոքր եւ միջին ձեռնարկություններին, ինչպես նաեւ կորպորատիվ հաճախորդներին: (Գ)

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-Ն ՀԱՅՏՆՈՒՄ Է

«Հարգելի՛ գործընկերներ եւ հաճախորդներ,

Տեղեկացնում ենք, որ մեր հաճախորդների հարմարավետությունն ապահովելու եւ ժամանակը խնայելու նպատակով «Թել-Սել»-ի բոլոր վճարամիջոցներով վերականգնվել են «Յուքոմ» բջջային կապի օպերատորի ծառայությունների դիմաց վճարումները: Շնորհակալություն մեզ հետ մնալու եւ մեր ծառայություններից օգտվելու համար:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:»: (Գ)

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ՖԱՍԹ ԲԱՆԿԸ՝ ԱՋԱԿԻՑ ԵՎ ՀՈՎԱՆԱՎՈՐ

ԱՄՓՈՓԵԼ ԵՆ

Ֆասթ Բանկն ու Mastercard միջազգային վճարային համակարգն ամփոփել են գործակցության երեք տարին: Համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում այս պահին Ֆասթ Բանկը թողարկում է Mastercard-ի պրեմիում տեսակի երկու ԱկնՔարտ՝ Master World եւ Master World Elite: Եզակի դիզայներական լուծումներով ԱկնՔարտերն այսօր սպասարկում են քարտապանների մեծ համայնքի՝ ապահովելով արագ եւ անվտանգ ֆինանսական գործարքների հնարավորություն ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Mastercard միջազգային վճարային համակարգի տարածաշրջանի ղեկավար Դավիթ Ջգուդաձեն, արժեւորելով Բանկի հետ գործակցությունը, նշել է. «Մեր համագործակցությունը զարգանում է դեպի ամուր եւ հեռանկարային գործընկերություն: Ակնհայտ է Ֆասթ Բանկի մեծ ներուժը հայկական շուկայում, եւ մենք ուրախ ենք ներդնել նոր ապրանքներ ու ծառայություններ»:

Ֆասթ Բանկը, հավատարիմ լինելով իր հաճախորդակենտրոն արժեքներին, ԱկնՔարտերի թողարկումից ի վեր իրականացրել է բազում մարքեթինգային եւ PR (հանրային հաղորդակցություն) արշավներ՝ իրազեկելով իր քարտապաններին Master World-ի եւ Master World Elite-ի հնարավորությունների եւ առաջարկների մասին:

Ֆասթ Բանկի քարտերի սպասարկման ծառայության ղեկավար Աննա Սահակյանը նշել է. «Համագործակցության ընթացքում Ֆասթ Բանկը եւ Mastercard վճարային համակարգը գոհացրել են հաճախորդների սպասելիքները եւ շարունակաբար ընդլայնել առաջարկվող հնարավորությունները: Գրանցված ձեռքբերումներով չսահմանափակվելով Ֆասթ Բանկը շարունակում է իրականացնել նոր նախագծեր եւ նախաձեռնություններ»:

Ֆասթ Բանկի եւ Mastercard միջազգային վճարային համակարգի հետ համատեղ աշխատանքները կշարունակվեն նույն դինամիկայով՝ «Ֆասթ»-ի արագությամբ եւ «Մաստեր»-ի վարպետությամբ:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է

Ֆասթ Բանկը սույն թվականի փետրվարի 23-ից առաջին եւ երկրորդ տրանշներով մեկնարկել է դոլարային արժեկտրոնային պարտատոմսերի միաժամանակյա երկու տեղաբաշխում՝ 5 միլիոն եւ 3 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր թողարկման ծավալով:

Առաջին տրանշի պարտատոմսերն ունեն 5 միլիոն ԱՄՆ դոլար ծավալ եւ թողարկվել են 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով: Այս ծավալով պարտատոմսերն ապահովում են տարեկան 6% արժեկտրոնային եկամտաբերություն եւ ունեն 24 ամիս մարման ժամկետ (23.02.2028թ.):

Երկրորդ տրանշի պարտատոմսերը թողարկվել են 3 միլիոն ԱՄՆ դոլար ծավալով եւ տեղաբաշխվում են 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով՝ 48 ամիս մարման ժամկետով (23.02.2030թ.): Այս պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կազմում է 6.25%:

Հավելենք նաեւ, որ ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված արտոնության համաձայն՝ տվյալ պարտատոմսերից ստացվող եկամուտն ազատված է եկամտային հարկից մինչեւ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Ֆասթ Բանկի դոլարային արժեկտրոնային պարտատոմսերը տեղաբաշխվելու են մինչեւ ս.թ. հունիսի 30-ը:

Ֆասթ Բանկն իր հաճախորդներին հնարավորություն է տալիս պարտատոմսերի ձեռքբերումն իրականացնել ինչպես Բանկի գործող 39 մասնաճյուղերում, այնպես էլ ամբողջովին հեռավար եղանակով՝ Fast Bank Mobile հավելվածի կամ առցանց բանկինգի միջոցով: Ձեռք բերված պարտատոմսերն ու դրանց ողջ նկարագիրն արտացոլվելու է հավելվածի «Իմ պարտատոմսերը» բաժնում:

ՀՀ ԿԲ նախագահի 2026 թվականի հունվարի 29-ի թիվ 1/44Ա որոշմամբ գրանցվել է պարտատոմսերի Ծրագրային ազդագիրը:

ԴԱՐՁԵԼ Է ՀՈՎԱՆԱՎՈՐ

Ֆասթ Բանկը դարձել է հայկական ֆուտբոլի առաջատար «Փյունիկ» ակումբի կանանց եւ երիտասարդական թիմերի տիտղոսային հովանավորը, ինչպես նաեւ իր հովանու տակ է առել «Փյունիկ» ակադեմիայի երկու պատանեկան թիմերը:

Ֆասթ Բանկի գործադիր տնօրեն Գարեգին Դարբինյանը նշել է. «Փյունիկ ֆուտբոլային ակումբի հետ այս համագործակցությունը մեր բնական արժեքների արտահայտումն է: Այս համագործակցությամբ մենք նաեւ ցանկանում ենք ներդրում ունենալ մեր ֆուտբոլասեր երեխաների աճի եւ զարգացմանը: Մենք վստահ ենք, որ համատեղ համագործակցությամբ կունենանք դրական արդյունք»:

«Փյունիկը» հայկական լեգենդար ֆուտբոլային ակումբ է՝ 16 չեմպիոնական տիտղոսով եւ 8 գավաթով: Այս ակումբից են մեծ ֆուտբոլ ճանապարհել Հենրիխ Մխիթարյանին եւ Հայաստանի հավաքականի ոսկե սերնդի աստղերին:

«Փյունիկ» ՖԱ գլխավոր տնօրեն Սուրեն Բաղդասարյանը կարեւորել է Բանկի հետ գործակցությունը. «Հուսով ենք, որ Բանկի հետ համագործակցությունը շատ լուրջ առաջընթաց կապահովի»,-ասել է նա:

Գործակցության մեկնարկի միջոցառմանը ներկա են եղել Հայաստանի ազգային հավաքականի դարպասապահ Հենրի Ավագյանը, Արտակ Դաշյանը եւ երեւանյան թիմի այլ առաջատար ֆուտբոլիստներ: Ավագյանը, իր հերթին, «Փյունիկը» համարում է իր երկրորդ տունը՝ շեշտելով, որ հենց այս ակումբում հանդես գալու ընթացքում են նրան նկատել եւ հնարավորություն տվել պաշտպանել ազգային ընտրանու գույները. «Փյունիկի նպատակները միշտ Հայաստանի առաջնություններում եղել են բարձր, տիտղոսների համար ենք պայքարում, այս տարի նույնպես փորձելու ենք հաղթել չեմպիոնությունը եւ գավաթը»,-ասել է նա:

Ֆասթ Բանկն այս գործակցությամբ շարունակում է ներդրումներ կատարել սպորտի ոլորտում:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՏՐԱՄԱԴՐԵԼ

Ֆասթ Բանկն աջակցություն է տրամադրել Հրանտ Մաթեւոսյանի անվան թանգարանի վերանորոգման համար:

Մեծանուն գրողի անունը կրող կենտրոնում «Հրանտ Մաթեւոսյան» մշակութային բարեգործական հիմնադրամն օրերս ամփոփել է հոբելյանական տարին:

«Հրանտ Մաթեւոսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի տնօրեն Դավիթ Մաթեւոսյանն ընդգծել է, որ նմանօրինակ գործակցությունները Մաթեւոսյանի պես մեծության ներկայությունն իրականության մեջ դարձնում են առավել կենդանի եւ զգալի. «Մաթեւոսյանի հոբելյանը պիտի նշեինք եւ այդ առիթով դիմեցինք բազումներին, եւ բազումներից քչերն արձագանքեցին, եւ այդ սակավների մեջ, այդ քչերի մեջ իր առանձնահատուկ տեղը եւ էական ներդրումն ունեցավ Ֆասթ Բանկը», -ասել է նա:

Ֆասթ Բանկի ֆինանսավորմամբ վերանորոգվել է Հրանտ Մաթեւոսյանի մշակութային կենտրոն-թանգարանի դահլիճը՝ դարձնելով այն առավել հարմար փոքր ներկայացումների եւ մշակութային միջոցառումների անցկացման համար: Նորացված դահլիճում արդեն անցկացվում են գրողին նվիրված շնորհանդեսներ ու մշակութային հանդիպումներ:

«Արվեստն ավելի ստույգ է, քան միջուկային ֆիզիկան»,-ասել է Հրանտ Մաթեւոսյանը. արվեստի այս գաղափարի շուրջ են միավորվում մշակութային նախաձեռնություններն ու սոցիալական պատասխանատվություն կրող կառույցները: Ֆասթ Բանկը շարունակում է իր հետեւողական աջակցությունը՝ նպաստելով արժեքների պահպանմանն ու ապագա սերունդների կրթությանը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՂՋԻԿԸ

ՏԱՆԸ ՆՍՏԱԾ՝ ՁԵՐ ՏԱՂԱՆԴԸ ՉԵՆ ԳՆԱՀԱՏԻ

Հաղորդավար, երգի ոլեական թատրոնի տնօրեն Մանե Գրիգորյանը, անդրադառնալով «Խազեր» մրցանակաբաշխության անվանակարգերում ներառվելու մասին որոշ երգիչների գրառումներին, նկատել է, թե միայն Հայաստանում է, երբ տաղանդավոր ու ակտիվ են, երգեր եւ ալբոմներ ունեն, բայց առաջադրվելու դեպքում բողոքում են:

«Ակտիվ չես, երգեր չես ձայնագրում, տեսահոլովակներ չես նկարահանում, նստած սպասում ես՝երբ տաղանդդ կգնահատվի: Չեն առաջադրում, բողոքում ես: Հույս ունեմ, որ բոլոր տաղանդավոր երգչուհիներն այս տարի գոնե ակտիվ կլինեն, որ հաջորդ տարի իսկապես ամենահետաքրքիր անվանակարգը կրկին «Տարվա լավագույն երգչուհի»-ն լինի: Շատ անվանակարգերի հետ համամիտ չեմ, բայց այդ ամենը զարգացնել է պետք, ոչ թե մերժել: Եղեք օրինակ, մոտիվացրեք, որ մի բան փոխվի փոփ երգարվեստում: Անորակը գրավել է շոուբիզնեսը, գոնե դուք ձեր որակյալ երգերով մի մերժեք»,- նշել է նա:

«Խազեր» մրցանակաբաշխության անվանումը վերցված է հայ միջնադարյան նոտագրական համակարգի՝ խազերի անունից: Հայկական ազգային երաժշտական ակադեմիան հայկական եւ համաշխարհային երաժշտության առանցքային դեմքերի միջեւ կապ հաստատելու բացառիկ եւ լիցենզավորված հարթակ է, որը ծառայելու է երաժշտական պրոդյուսերների, գործակալների եւ կայացած արտիստների գործունեության ընդլայնմանը, միջազգային շուկա դուրս գալու հնարավորությունների ստեղծմանը: Միավորելով հայկական երաժշտական ոլորտում նշանակալի ազդեցություն ունեցող մարդկանց՝ ՀԱԵԱ-ն նոր համագործակցություններ է ստեղծում համաշխարհային շուկայում՝ դառնալով հայկական եւ միջազգային երաժշտական ոլորտների միջեւ կամուրջ եւ ստեղծելով նոր հնարավորություններ եւ հարթակներ հայ արտիստների համար:

Հայկական ազգային երաժշտական ակադեմիան ակտիվ աշխատանքներ է տանում Recording Academy-ի (Grammy's) հետ համագործակցության ուղղությամբ եւ շուտով կունենա առնվազն երկու քվեարկող ձայն «Գրեմմի» մրցանակաբաշխության շրջանակում: Ակադեմիան խթանում է որակյալ երաժշտության ստեղծումը, տարածումը եւ հանրահռչակումը, ստեղծում նոր հարթակներ հետաքրքիր ձեռագիր ունեցող սկսնակ արտիստների, երաժիշտների համար:

2025 թվականին Հայկական ազգային երաժշտական ակադեմիան մեկնարկեց «Խազեր» հայկական երաժշտական ամենամյա մրցանակաբաշխությունը, որտեղ արտիստները, խմբերը եւ նախագծերը առաջադրվում են ինչպես սեփական դիմումի համաձայն, այնպես էլ երկրպագուների քվեարկությամբ: Դիմումների եւ քվեարկության արդյունքում ձեւավորվում է մեծ ցանկը, որից հետո ՀԱԵԱ խորհրդի անդամների քվեարկությամբ կազմվում է առաջադրված արտիստների ցանկը: Հաղթողները որոշվում են Ակադեմիայի անդամների քվեարկության արդյունքում: Նշենք, որ գրառումներին անդրադարձել է նաեւ Հայաստանի ազգային երաժշտական ակադեմիան՝ նշելով, որ անվանակարգերը կազմվում են ինչպես արտիստների սեփական դիմումների համաձայն, այնպես էլ երկրպագուների քվեարկության:

«Երկրպագուների 100-ից ավելի ձայներ հավաքելու պարագայում, արտիստները, խմբերն ու նախագծերն ինքնաբերաբար դառնում են մասնակից: Դա խոսում է տվյալ արտիստի ստեղծագործական ակտիվության եւ երկրպագուների համակրանքի մասին: Ակադեմիայի առաքելությունն է ստեղծել մրցունակ դաշտ, որտեղ կգնահատվեն լավագույն արտիստները՝ միեւնույն ժամանակ ոգեւորելով նրանց ներկայացնել նոր ստեղծագործություններ ու նախագծեր»,- արձանագրված է հայտարարությունում:

ՊԱՊՅԱՆԸ՝ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի է ունեցել մամուլի ասուլիս՝ նվիրված դիրիժոր եւ դաշնակահար Վահագն Պապյանի՝ Հայաստանի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավարի եւ գլխավոր դիրիժորի պաշտոնում նշանակմանը:

Վահագն Պապյանը խոսել է իր տեսլականի, նվագախմբի զարգացման ռազմավարության, ինչպես նաեւ միջազգային եւ տեղական այն նախագծերի մասին, որոնք նախատեսվում է իրականացնել առաջիկայում: Խոսելով Հայաստանի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր դառնալու առաջարկն ընդունելու մասին՝ մաեստրոն նշել է, որ դրա համար եղել են երկու կարեւոր պատճառներ:

«Առաջինը՝ այս նվագախմբի իրական արժեքը միշտ չէ, որ լիարժեք գնահատվում է: Մինչդեռ այն շատ լավ, բարձրակարգ եւ որակյալ նվագախումբ է՝ լայն կատարողական հնարավորություններով: Երկրորդը՝ այստեղ աշխատում են բարձր մակարդակի պրոֆեսիոնալներ, որոնց հետ հնարավոր է իրականացնել հետաքրքիր եւ բազմազան ծրագրեր»,- նշել է նա:

Պապյանի խոսքով՝ առաջիկայում նախատեսվում է ընդլայնել նվագախմբի կազմը՝ներառելով նաեւ փողային գործիքներ, ինչը հնարավորություն կտա զգալիորեն ընդլայնել ցանկը:

«Պատրաստում ենք հետաքրքիր ծրագրեր: Կլինեն ինչպես հատուկ նախագծեր, այնպես էլ ավանդական ծրագրեր, որոնք բնորոշ են նվագախմբին: Բնականաբար, կարեւոր տեղ է զբաղեցնելու նաեւ հայկական երաժշտությունը՝ մեր կոմպոզիտորների ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից ստեղծագործություններով»,- եզրափակել է մաեստրոն:

ԼՈՒՐԵՐ

ԲԻԼԼԻ ԱՅԼԻՇԸ ՄԱՏԱՆԻ ՈՒՆԻ

Երգչուհի Բիլլի Այլիշը «Գրեմմի» մրցանակաբաշխությանը ներկայացել էր մատանին մատնեմատին: Այս մասին հայտնում է Daily Mail պարբերականը, հաղորդում է gazeta.ru-ն: Բիլլի Այլիշը ներկա է գտնվել «Գրեմմի» մրցանակաբաշխությանը, որը տեղի է ունեցել փետրվարի 1-ին Լոս Անջելեսում: Կարմիր գորգի վրա երգչուհին մատնեմատին ցուցադրել է թանկարժեք քարերով զարդարված մատանին: Համացանցում լուրեր են տարածվել, որ փոփ երգչուհին ամուսնանում է ընկերոջ հետ: Սակայն հայտնի անձն ինքը դեռ չի մեկնաբանել երկրպագուների ենթադրությունը: Բիլլի Այլիշի եւ Նեթ Ուոլֆի միջեւ սիրավեպի մասին լուրերը տարածվեցին մարտի վերջին: Երգչուհին թողարկեց իր «Chihiro» երգի տեսահոլովակը, որում նկարահանվել է նաեւ դերասանը: Այնուհետեւ հայտնիներին պարբերաբար տեսել են միասին, իսկ հետո երկրպագուները լուսանկարել են արտիստներին մրցանակաբաշխությունից միասին դուրս գալիս:

ՉՈՐՍ «ՕՍԿԱՐ» Է ՍՏԱՑԵԼ

Ամերիկահայ կինոպրոդյուսեր Սեւ Օհանյանի «Մեղսավորներ» ֆիլմը դարձել է տարվա ամենաքննարկվող ֆիլմերից մեկը եւ «Օսկար»-ի 98-րդ մրցանակաբաշխությունում հաղթել 4 անվանակարգերում՝ լավագույն օրիգինալ սցենար (Ռայան Քուգլեր), լավագույն օրիգինալ երաժշտություն (Լյուդվիգ Գորանսոն), լավագույն օպերատորական աշխատանք (Օթըմ Դյուրըլդ Արքըփոու), լավագույն դերասան (Մայքլ Ջորդան):

● *Այսօր՝մարտի 17-ին՝ժամը 19:30-ին, «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Անփորձանք գիշեր» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պայմաններով կարող եմ ձեւակերպել ուսանողական վարկեր: Հնարավո՞ր է՝ ես իմ երեխաների համար ստանամ դա:

Մարգար Պահլեւունի, 60 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ՀՀ ֆինանսների նախարարությունը ունի ծրագիր՝ կրթության ֆինանսավորման այլընտրանքային գործիք, որը հնարավորություն կտա Ձեզ ձեռք բերել վարկեր ուսումնառության ընթացքում եւ դրանց հիմնական մասը մարել ուսումնառության ավարտից հետո: Ծրագրի շրջանակում ուսանողներին վարկեր են տրամադրվում 12 տոկոս տարեկան տոկոսադրույքով, որից 2 տոկոսը սուբսիդավորում է պետությունը, իսկ մեկ տարվա ընթացքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների դեպքում սուբսիդավորումը կկազմի 3 տոկոս: Վարկերը տրամադրվում են 10 տարի մարման ժամկետով՝ սահմանելով արտոնյալ ժամկետ՝ ուսումնառության ընթացքում առավելագույնը 4 տարվա համար, ինչը նշանակում է, որ այս ընթացքում մայր գումարի մարում տեղի չի ունենում, վճարվում են միայն տոկոսադրույքները:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ յուրաքանչյուր ուսանողի հաշվով նախատեսված է առավելագույնը 1.800.000 դրամ՝ առավելագույնը 4 մասնաբաժնով, սակայն ոչ ավելի, քան 450 հազար դրամը՝ կախված յուրաքանչյուր մասնագիտության համար սահմանված ուսման վարձավճարի չափից:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինձ հետաքրքիր է, թե ինչ հաճախականությամբ են կազմակերպվում նոտարական թարգմանչի որակավորման ստուգումները, եւ ինչպե՞ս հասկանալ, որ թարգմանիչը ունի որակավորում, որը՝ չէ:

Անահիտ Ադամյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Սիրով տեղեկացնում ենք, որ առնվազն տարեկան մեկ անգամ պետք է որակավորման ստուգում անցնեն թարգմանիչները: Ստուգման մասին հայտարարությունը հրապարակվում է www.moj.am եւ www.azdarar.am կայքերում ոչ ուշ, քան ստուգումն անցկացնելուց քսան օր առաջ: Առաջարկում ենք այս կայքերով հետեւել ընթացքին եւ ձեզ հուզող հարցերը գուցե կարողանաք գտնել:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք ձեզ, որ նոտարական թարգմանչի որակավորմանը մասնակցելու համար կարող են դիմել գործունակ անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն, օտար լեզվին տիրապետելու մասին վկայական:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Նիկոլ Փաշինյանը իր չհայտարարված քարոզարշավի շրջանակներում այս անգամ էլ ցուցադրեց իր տաղանդը թթու լավաշ ուտելու հարցում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 - 5 + 6 + 10
Կոտայքի լեռներ	0 - 4 + 6 + 9
Կոտայքի նախալեռներ	+ 1 + 4 + 9 + 12
Գեղարքունիք	0 - 4 + 4 + 8
Լոռի	- 2 + 2 +10 + 14
Տավուշ	- 1 + 2 +11 + 15
Արագածոտնի լեռներ	- 1 - 4 + 5 + 9
Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 5 + 9 + 14

Արարատ	+ 2 + 5 +11+ 14
Արմավիր	+ 3 + 6 +15 + 17
Վայոց ձորի լեռներ	- 2 - 5 + 4 + 8
Վայոց ձորի նախալեռներ	+ 4 + 7 +14 + 17
Սյունիքի լեռներ	0 - 3 + 4 + 8
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 3 +10 + 13
Սյունիքի հովիտներ	+ 6 + 9 +13 +16
Երեւան	+ 2 + 5 +13 +15

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*